

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՔԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

10.11.2022



Միրելի հայրենակիցներ

Այսօր Հայաստանի Հանրապետությունում նշում ենք Տեղական ինքնակառավարման մարմինների օրը, որի կապակցությամբ շնորհավորում եմ ՏԻՄ ոլորտի բոլոր աշխատակիցներին, ինչպես նաև նրանց հետ համագործակցող ու աշխատանքը համակարգող պետական կառույցների ներկայացուցիչներին:

26 տարի առաջ մեր երկրում կազմավորված տեղական ինքնակառավարման համակարգը նորություն էր ՀՀ-ի համար. այս ժամանակահատվածում այն անցել է բազում օրենսդրական, կազմակերպական վերափոխումներ ու դեռևս շարունակում է զարգանալ եւ կատարելագործվել՝ ի հայտ եկող նոր պահանջներին համահունչ:

Համայնքների ղեկավարները, ավագանիների անդամները, համայնքային ծառայողներն ու համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցները, թերևս, մարդկանց ամենամոտ գտնվող իշխանությունն են ու այն առաջնային օղակը, որն ամենասերտ շփումն ունի բնակչության հետ: Ուստի, ձեր ճիշտ ու սրտացավ աշխատանքի շնորհիվ է, որ քաղաքացիների ձայնը, խնդիրները, որոշումներ կայացնելու իրավունքի իրացումը պետք է հասնի առավել վերին աստիճաններին:

Հատկապես Սյունիքում ձեր ու մեր առջև մեծ ու կարեւոր խնդիրներ կան, որոնք պետք է լուծվեն բարդ պայմաններում: Համոզված եմ, որ համայնքապետարանների աշխատակազմերի արհեստավարժության ու պետական իշխանությունների հետ արդյունավետ փոխգործակցության շնորհիվ ՏԻՄ-ն իր լիազորությունների շրջանակում կշարունակի արդյունավետ աշխատանքը՝ հաղթահարելով առկա

մարտահրավերները, փոխելով համայնքների ու մարդկանց կյանքը
դեպի լավը:

Բոլորիդ մաղթում եմ հաջողություններ ու օգտավետ գործունեություն
ներ կարեւոր աշխատանքում՝ ի շահ մեր համայնքների ու պետության: